# Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյանի շնորհավորական ուղերձը Հաբ-Նիսանի կապակցությամբ

Հայաստանի ասորական համայնքի հարգելի՛ ներկայացուցիչներ, սրտանց շնորհավորում եմ ասորական Նոր տարվա՝ Հաբ-Նիսանի կապակցությամբ:

Մաղթում եմ, որ գարնան զարթոնքը խորհրդանշող այս տոնը բարեկեցություն և հաջողություններ բերի ձեզ:

Հայ և ասորի ժողովուրդները դարերի ընթացքում ապացուցել են, որ միասնաբար կարողացել են հաղթահարել բոլոր մարտահրավերները: Մեր եղբայր ժողովրդի հետ նույն ոգով և նվիրումով պատրաստ ենք շարունակել նաև ներկայում:

Առանձնահատուկ ուզում եմ շնորհավորել Կոտայքի մարզում բնակվող ասորական համայնքին՝ ընդգծելով մեր պատրաստակամությունը՝ նպաստելու ասորական համայնքի կողմից նախաձեռնվող ծրագրերի իրագործմանը ու համայնքում առկա խնդիրների արդյունավետ լուծմանը:

Հարգանքով՝ Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյան